## ՄՍԵՐ ՄՍԵՐՅԱՆԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

*XIX դ. երկրորդ կեսի հայ մանկավարժ և հրապարակախոս Մսեր Մսերյանի (1808—1873) և նրա որդի Զարմայրի (1836—1899) հարուստ արխիվը, որ պահվում է ՀՍՍՀ Մաշտոցի անվան Մատենադարանում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակի արևելահայ հասարակական հոսանքների պատմության ուսումնասիրման տեսակետից։ Այն պարունակում է ոչ միայն ժամանակի հոգևոր ու աշխարհիկ հայտնի գործիչներից Մսերյանների ստացած բազմապիսի նամակները, այլև Մսերի գրած նամակների պատճենները և կամ ամագրությունները։ Այս հանգամանքն, անշուշտ, ավելացնում է արխիվի ճանաչողական և դիտական արժեքը։*

*Ստորև հրապարակվող վավերագրերը կապվում են 1853 թ. Լաղարյան ճեմարանում Մի-՝ քայել Նալբանդյանին ուսուցչական վկայական տալու հարցի, ինչպես՝ և 1853-ի աշնանը նրան հետապնդելու, ապա ձերբակալել տալու գործում Մսերյան-Զալալյան խմբակցության հետևողական գործողությունների հետ։*

*«Արշալույս Արարատյան» թերթի խմբագիր Ղուկաս Պալդաղարյանին ուղղած Մսերի նամակը, անուղղակիորեն հաստատում է այն որոշակի գերը, որ կատարել է Մսեր Մսերյանը՝ «Լևոնի վիշտը» պոեմի հեղինակին հալածել տալու գործում. ընդ որում նամակը մատնում է Նաև Նալբանդյանի նկատմամբ նրա տածած բուռն ատելությունը, որը չէր մեղմացել անգամ Նալբանդյանի ողբերգական մահից հետո։*

*Ինչ վերաբերում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդ Մատթեոս Վեհապետյանին ուղղված երեք նամակներին, որոնք կապվում են Խ. Լաղարյանի աղջիկների «չհաս» պսակի պատմության հետ, ապա դրանք բացահայտում են Մսերի՝ 1850—1860-ական թվականների կղերաֆեոդալական հոսանքի պարագլուխներից մեկի բարոյական պարսավելի նկարագիրը, պարագլուխ, որի դեմ տարիներ շարունակ իրերի բերումով պայքարի մեջ էին լուսավորական շարժման հայ գործիչները։*

Մ. Հ. ՄԵԻԹԱՐՅԱՆ

### № 1

### Վեհափառ Տէր իմ՝

՝ի 8և—գեկ.

՝ի 1853 ամի և յաղ, ՌՅԳ։

՝ի Նոր Նախիջևան

Առաքեմ ընդ այս ՝ի ծանոթութիւն զնամակ յարգելի Մսեր վարժապետի և խոնարհաբար յայտնեմ, թէ մինչ ես ի Քիշնև գտանէի քաղաքի[1], էհաս անդանօր թղթակցութիւն մագիստրատին Նախիջևանու առ ՝ի վերադարձուցանել զՍուստայեան դպիրն (որ այժմ զինքն անուանէ Նալբանդեան), սակայն փոյթ ընդ փոյթ ընկալեալ եղև եղանակ և առաքեցաւ նա ի Մոսկով, որպէսզի ստուգցի ի Մսեր վարժապետէ զվկայական իւրոյ ուսման և այնու վկայականաւ կարգեսցի վարժապետ ի նմին ճեմարանի կամ այլուր, զի այսու դիտաւորութեամբ լցուցէ զբաղձանս, հակառակ իւրոյ կոչողին։ Ես ո՛չ անփոյթ գտեալ զայսմանէ զգուշացուցի ըստ պատկանելոյն զյիշեալ վարժապետն յայտնելով նմա զհանգամանս իրին[2]։ Այժմ ևս պարտ անձինս վարկանեմ, համաձայն մտաց նամակի յիշեալ վարժապետի, առաքել աստէն զամսաթիւ և զհամար թղթակցութեան տեղւոյս մագիստրատի առ պոլիցեայն Մոսկուայ, որպէսզի զգուշասցեն և գիտասցեն, թէ յիշեալ Նալբանդեանն հրամանաւ իշխանութեան պարտի դառնալ ՝ի Տփխիս։

Նորին ազնուութիւն աղայ Յարութիւն Խալիպեանց հայեցեալ ՝ի պարագայս ժամանակին, ՝ի ժամ ընտրութեան նոր քաղաքական գլխոյ, լաւ համարեցաւ հրաժարել ՝ի գործոյն և ՝ի տեղի նորա կարգեցաւ աղայ Մանուկն Ալաջալեան։

Երեցփոխան Քիշնևու եկեղեցւոյ Յարութիւն Ստեփան Ծածուկեան, որում յանձնեալ եղև կառաւարութիւն կրպակաց տեղւոյն, որ էր ընդ իշխանութեամբ աղայ Կարապետի Անուշեան, հարուածեալ է կաթուածովք։

Նուաստ ծառայ Սարգիս վարդապետ Ջալալեանց*

Կաթողիկոսական դիվան, թղթ. 159,
վավ. 139, էջ 170

յ30 Նոյեմբերի
1853 ամի
'ի Մոսկուա

## № 2
## Զերոյին գերապատուութիւն Աստուածաշնորհ Հա՛յր հոգևոր

Ընկալեալ զարժանայարգ նամակ Ձեր, տողեալ 'ի 17 ամսոյս, կարևոր դատիմ փութալ 'ի դարձ պատասխանւոյ՝ առ ի տալ խորհրդաբար զյետադայդ տեղեկութիւն։

Յետ ստանալոյ իմ զկանխագիծ գրութիւն սրբոյ Հօրդ 'ի մասին ստահակ պատանւոյն, զգուշացայ խոհեմութեան ճանապարհաւ 'ի մասնակից լինելոյ կամ յօժանդակելոյ իւիք 'ի կատարումն նպատակի մտացն, որոյ վասն եկեալ էր նա. մինչ զի տեսանելով նորա, թէ չունի ինչ օգտիլ յինէն, չոգաւ աստի վաղվաղակի 'ի Պ. բուրգ, ուր և զամենայն հնարսն 'ի գործ եդեալ և պատրեալ զաղաւնեմիտսն՝ հաճեցոյց զնոսա յընդունել զինքն 'ի թիւս ուսուցչաց ճեմարանի։

Մինչև ցայնժամ խոհեմութեամբ վարկայ ես լռել՝ ակն ունելով, թէ ինքնին 'ի յայտ եկեսցեն գաղտնիք խաբեութեան՝ 'ի գրելն Հ. կառաւարութեան կամ մագիստրատի տեղւոյդ զայնմանէ առ խորհրդարանն ճեմարանի կամ առ զինուորական գաւառապետն տեղւոյս։

Իսկ լսբրև տեսի, թէ չի՛ք գրաւոր ինչ տեղեկութիւն, փութացայ ազդ առնել խորհրդաբար վերատեսչի ճեմարանին, և միջնորդութեամբ նորա՝ կառավարչին, թէ պատանին այն, որում յանձնեալ է ուսուցչութիւն հայկական լեզուի ի ստորին դասատունս՝ է այսպիսի կամ այնպիսի ոք, և թէ ընդունելն զնա ի պաշտօն՝ անպատուութիւն մեծ բերէ ճեմարանին և մեզ իսկ գլխովին։

Յիմանալ կառաւարչին զայս, ծանոյց իսկոյն խորհրդաբար որում հարկն էր 'ի Պետերբուրգ։ Եւ զի վարժապետութիւն պատանւոյն չև էր հաստատեալ ընդ օրինի, մնաց գործն 'ի կախ և ընդ երկբայութեամբ մինչև ցայսօր։

'Ի վերջնում նամակի Ձեր դրեալ էիք, թէ «տեղւոյս մագիստրատն պահանջեաց 'ի պօլիցայէն Մոսկուայ, առաքել առ ինքն զստահակ Նալբանդեանն և այլն...»։ Սակայն մինչ ցայս կէտ գրութեանս պօլիցայն տեղւոյս չարար ինչ հարց և քննութիւն վասն այդորիկ։ Երևի թէ դեռ չէ ստացեալ զգրութիւնն մագիստրատի։ Եթէ արդարև պահանջեալ իցէ կամ պահանջիցէ մագիստրատն զյիշեալ պատանին ի պօլիցայէն տեղւոյս կամ 'ի կառաւարութենէ ճեմարանին, անշուշտ արձակեսցեն զնա 'ի ճեմարանէ, և առաքեսցեն այդր։ Քանզի ո՞չ ոք յանձն առնու հակառակել օրինաց։ Բայց պահանջումնս այս պարտի լինել փութով՝ առանց անագանութեան, զի եթէ անցանիցէ այլ ևս ամիս մի, յայտ է թէ հաստատեն օրինօք զվարժապետութիւն նորա, և յայնմհետէ դժուարին լինի հանել զնա 'ի պաշտօնէ։ Ուրեմն չա՞ն դիք փութացուցանել աւուրբ յառաջ զպահանջողական գրութիւն մագիստրատին առ պօլիցայն տեղւոյս կամ առ զինուորական գաւառապետն։

Ո՞չ անօգուտ ինչ լինի, եթէ Դուք ևս Ձերով գրութեամբ փութասջիք գո՛նէ վերատեսչի ճեմարանին Մկրտչի Յովսեփեան Էմինայ ծանուցանել մանրա-

* Ներսես Աշտարակեցու մակագրությունը նամակի վրա՝ «Մարգիս վարդապետ Ջալալեանց, 26 դեկտեմբեր ընկալայ»։

մասնաւոր զանցս իրացն, զի այր խոհեմ է նա և խորհրդապահ. և կարէք անկասկածաբար հաղորդել նմա զՁեր խորհուրդս։

Ակն ունելով անյապաղ ընդունել զպատասխանի գրոյս առ 'ի միամտութիւն՝ մնամ յանկեղծ սրտէ**։

Ձերոյին գերապատուութեան նուաստ ծառայ
**Մ: Մսէրեանց**

*Կաթողիկոսական դիվան, էջ 171*

'ի 6 օգոստ.
1853 ամի։

## № 3

### Առ Մատթէոս արքեպիսկոպոս առաջնորդ Պեսարաբիոյ և Նոր Նախիջևանի

Ընկալեալ զտողեալն յ8 Յուլիսի զարժանայարդ գրութիւն Ձերոյին սրբազնութեան, և ծանոթացեալ այնու ցարդ անծանօթին ինձ Թղթաբերի***, և ապա հասու եղեալ 'ի նորուն բերանացի պատմութենէ՝ գիտաւորութեանցն Ձերոյ վասն նորա, պարտ անձին վարկանիմ տալ զհետագայ տեղեկութիւնդ։

Ճեմարանն Լազարեան ունի իրաւունս 'ի հարցաքննութիւն ընդունելոյ միայն զաշակերտեալսն 'ի ծոցի իւրում։ Վասն որոյ վարժեալքն յա՛յլ ուսումնարանս կամ 'ի դպրոցս՝ եթէ կամիցին ստանձնել 'ի Ճեմարանիս զպաշտօն ուսուցչի արևելեան լեզուաց՝ յորոց մի է և հայկականն, պարտին զօրինաւոր վկայականն վասն ուսման իւրեանց ունել յայնց ուսումնարանաց, յորս վարժեալքն են։ Եւ եթէ չունիցին զայն, պարտին նախ հարցաքննիլ 'ի համալսարանին Պ. բուրգայ, և ապա անդուստ առնուլ զվկայականն որպէս և ումն 'ի նորեկ վարժապետաց տաճկական լեզուի չունելով զպահանջեալ վկայականն չոգաւ աստի ամսովք ինչ յառաջ 'ի Համալսարան անդր և հարցաքննեցաւ 'ի տաճկական լեզուի, և ունի դարձեալ հարցաքննիլ յայլ ասիական լեզուս. ևս և 'ի Ռուսացն։

Յայսոսիկ հանդամանս իրացն հայեցեալ նախայիշեալ Թղթաբերն՝ հարկեցաւ դիմել փութանակի 'ի Պ. բուրգ, ակն ունելով զհարդ և իցէ տնօրէնութեամբ և հրամանաւ Հոգաբարձուի[1] Ճեմարանին՝ ըստ Ձերում յանձնարարական գրութեան առ նա՝ կատարումն տալ գործոյն։ Եւ արդարև չել 'ի դերև ակնկալութիւն նորա, զի (որպէս գրէ նա ինքն 'ի նամակին՝ որ առ իս ꞵ[3] էնամսոյս)[2], բարեսիրտ Հոգաբարձուն յարգելով զխնդիր Ձեր՝ գրեաց հրաման 'ի կառավարութիւնն Ճեմարանի՝ ընդունել զնա 'ի շարս ուսուցչաց հայկական լեզուի։ Հրամանագիրս այս հասեալ առ իս այսօր՝ տուաւ 'ի կառաւարութիւն անդր։ Այլ զի չէ՛ աստ այժմ կառավարն Ճեմարանի (զի գնացեալ է 'ի գիւղն իւր) հարկ 'ի վերայ կայ սպասել դարձի նորա՝ առ 'ի գործ դնելոյ զհրամանն զայն։ Իսկ ընտրեալն 'ի պաշտօն ուսուցչութեան՝ կարէ ցայնժամ մնալ 'ի Պ. բուրգ յաւարտել զիւր քննութիւն։ Յետ այնորիկ 'ի վերադառնալն այսր, յայտ է, թէ ունի նա ուսուցանել զլեզուն հայոց յայնոսիկ դասարանս՝ յորս դասատու կարգել հաճեսցի կառավարիչն ըստ խորհրդոյ Տեսչին՝ որում յանձնէ ուսումնականն կարգաւորութիւն։

Մնամ...
'ի Մոսկուա
**Մ. Մսէրեանց**

*Մսերյանների ֆոնդ, թղթ. 207, վավ. 1972*

---

** Այս վավերագիրն օգտագործել է Աշ. Հովհաննիսյանը («Նալբանդյանը և նրա ժամանակը», I գիրք, Երևան, 1955, էջ 64)։

*** Այն է՝ Միքայէլ դպրի Նախչեանցւոյ, որոյ տոհմանունն զառաջինն էր «Ոստայեանց» և ապա փոխեալ էր 'ի «Նալբանդեանց»։

## № 4

'ի 23 յուլիսի
1851 ամի

### Առ Մատթեոս արքեպիսկոպոս առաջնորդ Պեսարապիոյ և Ն. Նախիջևանի

Ակն ունիմ, թէ զդրութիւն իմ առ Ձերդ սրբազնութիւն տողեալ յամսոյս 2, ստացեալ իցէք հանդերձ խոնարհական ընծայաբերութեամբս, այն է միով «Հրահանդ քրիստոնեական» անուանեալ մատենիւ[1], զոր 'ի լոյս ընծայեցի 'ի պէտս ուսումնատենչիկ մանկտւոյ ազգիս։

Երկրորդիս այսմ դրութեան պատճառս է եկաւորումն այսր 'ի Պ. բուրգայ մերազնեայ ազնուականին՝ Ագաֆոնի Դաւթեան Հաքիմեանց և իշխանապետին Յովհաննու Լազարեանց, որք մտին 'ի քաղաքս յամսոյս 8։ Առաջինն 'ի սոցունց յետ աւուրց ինչ ունի գնալ 'ի գիւղ իւր և երկրորդն կամի ուղևորիլ 'ի Տփխիս, և ապա անտի անցանել յէջմիածին[2]։ Եւ զի ցանկութիւն էր նորա և ընդ Ձերում սրբազնութեան ծանոթանալ, 'ի մտի եղ նախ առ Ձեզ դիմել, բայց լուր առեալ, թէ հանդերձիք Դուք 'ի մօտ աւուրս գնալ 'ի Քիշնև, բարւոք համարեցաւ յամեցուցանել զճանապարհորդութիւնն. և այժմ իմովս բանիւ խնդրէ 'ի Ձէնջ, զի եթէ չև ևս մեկնեալ իցէք 'ի քաղաքէդ, մնասջիք այդր գոնէ ամիս մի ևս մինչև ցժամանել իւր այդր։ Եթէ հաճոյ և ո՛չ անկարելի թուիցի Ձեզ կատարել զխնդիրս զայս, հաճեսջիք աղաչեմ՝ փութանակի յայտնել ինձ գրով; որպեսզի կարողացայց և ես միամտեցուցանել զնա այնու։

Գործն՝ որոյ վասն յանձն առնու նախայիշատակեալ Հայրենասէրդ զայնչափ երկարագնաց ճանապարհորդութիւն[3] ըստ շատ և շատ թախանձանաց Լազարեան իշխանապետաց, է՛ կարևոր ինչ և ա՛յնչափ կարևոր, մինչև ըստ ասելոյ նորա յաջողուածով կատարումն նորին ունի յառաջ ածել բարութիւնս մեծամեծս թէ՛ վասն ազգի մերոյ և թէ՛ վասն Լազարեանց տոհմին, որպէս և անկատար մնալն՝ վնասս աղետալիս։ Զայս ամենայն, Հա՛յր, դուք ինքնին կարեք 'ի միտ առնուլ՝ կշռել և դատել ըստ Ձերում խոհականութեան՝ յորժամ լիապէս տեղեկասջիք հանգամանաց իրին։ Պարտ է ասել և զայս, զի անուն և յարգ առնդ մեծ է յայսոսիկ կողմանս, մանաւանդ առաջի պաշտօնակալաց պետութեան, սակս գործունեութեանն և աշխարհութեանն 'ի բազում գործս և յաւէտ ի քաղաքականս. ոյր աղագաւ և իշխանապէտքն Լազարեանք երկոքին եղբարք՝ Յովհաննէս և Խաչատուր՝ զդա ինքն ընտրելով ինքեանց խորհրդական հաւատարիմ, առաքել կամին առ Վեհափառ Հայրապետն մեր առ 'ի խօսել 'ի դիմաց իւրեանց զդիտաւորութենէն զոր ունին։ Իսկ ես աւելորդ համարեալ աստանօր զգովութիւն առնդ երկարել, զա՛յս միայն փութամ աղդ առնել, զի Դուք ևս զոր ինչ բարի խորհուրդս կամ դիտաւորութիւնս ունիցիք թէ՛ վասն կարգաւորութեան վիճակի Ձերոյ և թէ՛ վասն այլոց առանձնական գործոց, կարո՛ղ եք անկասկած մտօք հաղորդել դմա, ըստ որում կարէ դա զամենայնն 'ի գլուխ հանել գեղեցիկ յաջողուածովք, և առնել ևս զի նաև Ձերումդ անձին յաւելցին յիւրումն ժամանակի փառք և պատիւ 'ի Վեհագունէն. միայն հարկ է, զի յօժարեսջիք արդեն համակերպել զկամս Ձեր ընդ կամաց իշխանապետացն 'ի կատարումն խորհրդոյն՝ զոր ունի նա յայտնել Ձեզ առանձնաբար բերան 'ի բերան խօսելով։ Եթէ խիթալի ևս թուիցի իրդ 'ի պատճառս արտաքոյ նախնագունիցն գոլոյ կանոնաց և սովորութեանց, չէ՛ ինչքանզի հայելով 'ի չարիսն, որ երկոցունց կողմանց՝ զփոքրագոյնն ընտրել 'ի դե՛պ է. նա՛ զի թերևս դուք ինքնին ևս ընդ աստուածայնոյն Պաւղոսի՝ ուխտիւք խնդրեք նզով լինել 'ի Քրիստոսէ վասն եղբարց և ազգականաց ըստ մարմնոյ՝ որք են Հայկազնեայք։

Մնամ...
'ի Մոսկուա
Մ. Մսերեանց

Մսերյանների ֆոնդ, վավ. 1969

Լրաբեր 1—6

## № 5

'ի 13 օգոստ.
1851 ամի

### Առ Մատթեոս Արքեպիսկոպոս՝ առաջնորդ Պեսարապիոյ և Ն. Նախիջևանի

Ազնուական հայրենասէրն մեր՝ Ագաֆոն Դաւթեան Հաքիմեանց (զորմէ լիով դրեալ եմ 'ի նամակի իմում առ Ձեզ 'ի 23ից յուլիսի) յամսոյս ուղևորեցաւ աստի գալ առ Ձեզ՝ առ ի խօսել առանձնաբար զկարևորագոյն խորհրդոյն՝ ըստ յատուկ յանձնարարութեան իշխանապետացն Լազարեանց, որք մեծաւ յուսով ակն ունին՝ թէ Ձերովդ խոհական տնօրէնութեամբ 'ի գլուխ ելցէ գործն առանց մեծի դժուարութեան, ըստ որում զդժուարինսն դիւրացուցանել՝ գործ է խոհականութեան։

Եթէ ըստ բաղձանաց իշխանապետացն և ըստ ջանից առնդ ազնուականի արդիւնասցի խորհուրդն այն, մարթ է յուսալ՝ թէ ո՛չ միայն ազգի մերում և եկեղեցւոյ յառաջասցին բարիք մեծամեծք, այլև Ձեզ իսկ առանձինն, այլովքն հանդերձ, քանզի զի՞նչ և խնդրել ունիցիք՝ յանձն առնուն նոքա կատարել. միայն կամին, զի դուք մի՛ հրաժարեսջիք 'ի համակերպելոյ զկամս Ձեր ընդ նոցայոցն՝ պատճառելով զվաղնչուց կանոնս կամ կասկած ինչ կրելով 'ի Հայրապետին կողմանէ, կամ խիթալով գայթակղութիւն տալ ժողովրդեան։ Թէպետ և երեքին պատճառքդ ըստ բաւականին զօրաւորք երեին, բայց մեք հայելով յայլևայլ պարագայս իրին՝ յայտնի իսկ կարեմք գուշակել, թէ 'ի վախճանի այդ ամենայն ա՛յնպէս կորուսանել ունին զոյժ իւրեանց, մինչև չատիկել խափան արկանել գործոյն. և այս ևս վասն երից պատճառաց։ Մի՝ զի դուք, գոլով օրինաւոր Տեսուչ և առաջնորդ Ձեզ յանձն եղելոյ հօտի, ունիք իրաւամբք զօրէնս 'ի Ձեր ձեռս, և որպէս բարւոք համարիցիք՝ իշխան եք տնօրինել երբեմն զայնպիսի ինչ՝ որ թեև արտաքոյ իցէ առաջնոցն կանոնաց, այլ վասն հարկին ստիպելոյ կարևոր դատի և օգտաբեր։ Երկրորդ՝ զի և նորին վեհափառութիւնն թէպետ և գժուարանայ յայտնապէս տալ զհաւանութիւն իւր առ այն, բայց (որպէս զեկուցեալ է հաւատարմի ուրումն բերանով) ինքն ևս յօժար է, զի այլք առանց ինքեան ծանուցանելոյ՝ կատարումն տացեն գործոյն և 'ի լինել այսր այսպէս, ոչ այլ ինչ պահանջի, բայց միայն լռութիւն 'ի նորուն կողմանէ։ Երրորդ՝ զի որովհետև Դուք՝ ո՛չ հանրական գլուխ եկեղեցւոյ, այլ՝ մասնաւոր Տեսուչ եք միոյ ևթ վիճակի, մեղմելն Ձեր զխստութիւն օրինաց յայնպիսում դիպուածի, որ ունի իրաւացի պատճառս, չկարէ լինել օրինակ ամենեցուն յընդհանուր ազգիս, և կամ տալ ումեք գայթակղութիւն։

Արդարև ճշտիւ և անթերի պահպանութիւն եկեղեցական օրինաց՝ բարի՛ է ըստ ինքեան, և չէ՛ պարտ վասն որո՛յ և իցէ առանձնական կամ մասնաւոր օգտի ապախտ առնել զօրինօք, սակայն յորժամ չիցէ հնար պահել զայնս առանց մեծի վնասու կամ առանց խափանման հասարակացն բարւոյ, արժան է յայնժամ Առաջնորդաց ժողովրդեան, որպէս ուսուցանեն աստուածաբանք, ի վար արկանել զգերարդարութիւն՝ փոխելով կամ չափաւորելով կամ բացատրելով զօրենսն ըստ մտաց կամ դիտման օրինադրին. և այն՝ խորազնին վսեմ դատողութեամբ, որում աստուածաբանք անուն տան գերզգօնութիւն։ Առ այս օրինակ ունիմք, բաց յայլոց, և զմարգարէն Դաւիթ, որ 'ի քաղցնուլն՝ գերարդարութիւն առնելով՝ եմուտ 'ի տաճարն աստուծոյ և առանց մեղաց եկեր և ետ ուտել որոց ընդ իւր էին՝ զհացն զառաջաւորութեան, զոր օրենք՝ քահանայից և եթ թոյլ տային ուտել (Մատ. ԺԲ)։ Եւ այն օրինազանցութիւն Մարգարէին՝ ո՛չ միակն անմեղադրելի, այլև իբրև գովելի իմն համարի ըստ Տերունական բանին, զի կեանք մարդոյ է մեծագոյն բարի, զոր առաւել դիտէ օրէնսդիրն, քան զծիսական օրինացն պահպանութիւն։ Սոյնպէս և Դուք տեսանելով արդեն զմեծագոյն վնասն ապագայ, որ ունի յառաջ գալ 'ի խստիւ պահպանութենէ կանոնացն եղելոց յաղագս ազգահամարոյ ամուսնութեան, մարթէք թուլտուութեամբ իմն Տնօրինումն առնել ըստ առաջնորդական իշ-

խանութեանն Ձեզ տուելոյ, զի ուր հարկն ստիպէ՝ անմեղադրելի է տնօրինումն, իսկ ուր օգուտն հասարակաց պահանջէ՝ գովելի է, ըստ միաձայն վճռոյ աստուածաբանից։

Ի վախճանի՝ զա՛յս ինչ ևս կարևոր համարիմ ա՛զդ առնել խորհրդաբար։ Ձևրում սրբազնութեան, զի եթէ օրինապէս ըստ հաճութեան և հրամանի Հոգևոր առաջնորդաց անհնարին դատեսցի գործոյն կատարումն, իշխանապէտքն հաստատեալ են 'ի միտս (որպէս ասաց ինձ մին 'ի նոցանէ) 'ի գլուխ տանել։ զայն 'այլո՛վ իմն եղանակաւ, որ հնարաւոր է. և յայնմ հետէ մի՛ 'ի բազմաց վնասուց լինի և այն՝ զի հովացեալ նոցա 'ի սիրոյ հայրենեաց, ո՛չ ևս քաղցրակամք ունին հայիլ 'ի մանկունս ազգիս՝ որք առաքին 'ի ճեմարան նոցա 'ի կողմանց կողմանց Հայաստանի։

'ի Մոսկուա։
Մ. Մսերեանց

Մսերյանների ֆոնդ, վավ. 1970

## № 6

'ի 16 օգոստ.
1851 ամի

### Առ Մատթեոս Արքեպիսկոպոս առաջնորդ Պեսարապիոյ և Ն. Նախիջևանի

Վասն նամակացն, զորս դրեալ իմ յանուն Ձերդ Սրբազնութեան 'ի 23 յուլիսի և 'ի 13 ամսոյս, պարտս ինձ համարիմ այսու երրորդ գրութեամբս ծանուցանել Ձեզ խորհրդաբար, զի այնոքիկ ո՛չ գրեցան իմով յօժար կամօք, այլ իհարկե, և համարեա՛ թէ բռնադատ կամօք. քանզի չեղև ինձ հնար այլով իւիք եղանակաւ պրծանիլ 'ի ձեռաց անդուլ թախանձողին[1], որ երդնոյր կրկին և երեքկին յարևն իւր և յարևն իւրոց զաւակաց, թէ Սրբազնագոյն Հայրապետին մերոյ այս իսկ է կամք. և թէ նորին Վեհափառութիւնն՝ ո՛չ միայն բերանով առն ուրումն աստիճանաւորի եկելոյ յէջմիածնէ 'ի Պ.բուրգ, այլև առանձին գրով. խորհուրդ է տուեալ Վեհազնեայց**** առնել զոր խորհինն յօգուտ ազգատոհմի իւրեանց՝ 'ի ձեռն վիճակաւոր առաջնորդի, բաւական համարելով յիւրմէ կողմանէ զլոկ լռութիւնն կամ զանտես առնելն։ Զայսոսիկ թերևս և Ձեզ ասիցէ նախայիշեալ թախանձարկուն. բայց (խոստովանաբար ասեմ) այժմ ո՛չ բոլորովին աներկբայելի թուին ինձ բանքդ. զի ո՛չ զգիրն տեսեալ եմ երբեք, և ո՛չ զբանբեր աստիճանաւորն գիտեմ՝ թե ո՛վ է. մանաւանդ զի քաջ իսկ յայտնի է ինձ խորախոհ նկատումն և ամենազգոյշ արթնութիւն Վեհափառ Հայրապետին մերոյ յամենայն յայսպիսի դէպս։ Վասն որոյ, թէ ինձ կամիցիք լսել, բարւոք առնեք չվստահանալ գլխովին և վաղվաղակի յո՛ր և իցէ բերանացի բանս (որպէս եսս վստահացայ չգովելի պարզամտութեամբ). այլ՝ տեղեկանալ նախ ստուգութեան ասացելոցն, և ապա ձեռնամուխ լինել 'ի տնօրէնութիւնն, զոր հաճոյ թուիցի Ձեզ առնել, որպեսզի լինիցի այն՝ մի՛ Ձերով և եթ առանձնական հաճութեամբ, այլ գո՛նէ նաև լռիկ համաձայնութեամբ նորին Վեհափառութեան։ Եւ զայս դիւրին լինի Ձեզ առնել, եթէ խոհեմութեամբ (գովելի խորագիտութեամբ) ջան դիջիք յերկարաձգել զիրսն ցժամանակ մի, և եթէ խնդրեսջիք ևս աչո՛ք տեսանել կամ զիսկական նամակն գրեալ 'ի նորին Վեհափառութենէ առ Վեհազնեայսն 'ի մասին այնր խորհրդոյ, և կա՛մ զպատճեն նորին դրեալ 'ի հաւատարիմ անձնէ։

Թեպետ և ակն ունիմ, թէ Դուք ինքնին Ձերով խոհական հանճարով կարող եք 'ի միտ առնուլ զայսոսիկ՝ և ըստ այնմ տնօրինել զպատշաճն՝ առանց ումէք գայթակղութեան պատճառս տալոյ, կամ առանց տարաձայնութիւն ծնուցանելոյ 'ի միջի ազգայնոց մերոց, սակայն և ես ահա յիմմէ կողմանէ՝

---

**** Լազարեան իշխանապետաց։

իբրև հարազատ որդի սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ պարտ անհրաժեշտ համարելով գրել զոր գրեցիս, մնամ...

Ի Մոսկուա
Մ. Մսերեանց

Մսերյանների ֆոնդ, վավ. 1971

№ 7

Ի 20 էն հոկտ.
1867 ամի

Ի նամակին՝ որ առ Ղ. Պալդազարեան, Ի Զմիւռնիա
Առանձին բարեկամական ազդարարութիւն

Զարմացայ ես զարմացին թերևս և այլք ընդ ա՛յն, զի յ809 թիւն Արշալուսոյ[1] (չգիտեմ՝ որո՞վ դիտմամբ և յորմէ՞ ոգւոյ շարժեալ) Ի գովութիւն առնուք զպարսաւելին ըստ բազում գլխոց՝ զպայտական գրքոյկն[2]... համարելով՝ թէ հեղինակ նորին (կամ դիմակակիրն հեղինակի)[3] ազգասէր երիտասարդ ոմն իցէ, և թէ՝ նա Ի հայրենասիրական եռանդուն ոգւոյ շարժեալ մեծ տաղանդով ու սրտաշարժ կերպիւ նկարագրեալ իցէ զդժբախտ վիճակ Հայաստանի, և խստիւ քննադատեալ իցէ զփառասէր և զարծաթասէր երևելի ազգայինս՝ առանց խնայելոյ Ի մեծագոյն մասն վարժապետաց և Ի կղերս, զորս անուանէ նա բարեկամս խաւարի և տգիտութեան։ Եւ ապա յաւելուք ևս, թէ «հայրենասիրութեան և ազատասիրութեան ոգին կատարելապէս կը տիրէ այս պատուական (պայտական) գրքուկին մեջ»։

Երբ Ձերով ընտրողութեամբ իցէք դրեալ զդոսին՝ սխալեալ եք, իսկ եթէ այլոցն և եթ ձայնակցութեամբ՝ պատրեալ եք։ Ըստ իս՝ յամենայն ասացեալսդ ա՛յն միայն է ճշմարիտ, զի մեծատաղանդ քերթողդ զամենայն կղերս, ընդ որս և զայնոսիկ՝ առ որս քարաձիգ լինել ջանայ, «բարեկամս խաւարի և տգիտութեան» անուանէ եւ թերևս այդ իսկ իցէ ստոյգ նշանակ նորա աղատասիրութեանն, և դովին իսկ պատճառաւ արժանացեալ իցէ գեղեցիկ դրուատեացդ։ Բայց Ձեզ չի՞ք ինչ վնաս յայդմանէ, զի որ համարերն զՁեզ մինչև ցայժմ մի Ի խաւարին բարեկամաց, ունի փոխադրել յայսմհետէ Ի կաճառս լուսաւորելոց։

Չէ՞ մարթ անտեսել և զայն՝ զի ո՞չ սակաւ անհամութիւնք են պուետիդ Ի կրօնականին, զորոց խօսել ո՞չ է տեղւոյս։ Իսկ վնասակարագո՞ն նորա անզգուշութեանց (կամ լաւ ևս ասել՝ ապերասանութեանց) Ի Քաղաքականին՝ թուի թէ և Դուք իսկ ինքնին Ի վերայ հասեալ եք, քանզի Ի քաղուածս տողեց նորա (յ810 թիւն Արշալուսոյ) է՞ ինչ՝ զոր ո՞չ ճշդիւ հաւատարմութեամբ՝ այլ փոփոխելով իմն Ի մէջ բերէք[4]։ Այո՞, գո՞րծ է այդ խոհեմութեան, այլ ո՞չ՝ ե ճշմարտասիրութեան։

Մ. Մսերեանց

Մսերյանների ֆոնդ, վավ. 1986

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 1

1. Սարգիս Ջալալյանը Ներսես կաթողիկոսի հանձնարարությամբ իբրև լիազոր-քննիչ 1853 թ. գործուղվել էր Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդարանը՝ Միքայել Նալբանդյանի շուրջ ստեղծված կեղծ նամակների քննության համար։

2. Նկատի ունի 1853 թ. հուլիսի 18-ի թվակիր իր նամակը, որով Մսերյանին խստիվ հանձնարարել էր ուսուցչության վկայական չտալ «ի Վեհափառ կաթողիկոսէն փախստականն» Միքայել դպիր Նալբանդյանին։

№ 2

1. Լաղարյան ճեմարանի վերատեսուչն էր պրոֆեսոր Մկրտիչ Էմինը (1815—1890), իսկ կառավարիչը՝ (դիրեկտոր) դնդապետ Սեմյոն Զելենոյը։

## № 3

1. Լազարյան ճեմարանի հոգաբարձուն Հովհաննես Լազարյանն էր։
2. Նալբանդյանի նամակը ուղղված Մսեր Մսերյանին, չի պահպանվել։

## № 4

1. «Հրահանգ քրիստոնեական» գրքի լրիվ վերնագիրն է՝ «Հրահանգ քրիստոնեական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայցս»։

2. Նամակագիրը չփոխել է անունները.՝ իրականում «առաջինը», որ պետք է մեկներ իր գյուղը, վերաբերում է Հովհաննես Լազարյանին։ «Երկրորդը», որն ուղևորվելու էր Տփխիս-էջմիածին, Աղաֆոն Հաքիմյանցն (Ակիմյան) էր։

3. «Գործը» վերաբերում է խաչատուր Լազարյանի երկու դուստրերի «չհաս» ամուսնության թույլտվությանը՝ իրենց հորաքույրերի որդիների հետ։ Քանի որ Ներսես Կաթողիկոսը դեմ էր այդ ամուսնություններին, Լազարյանները ձգտում էին թույլատվությունն ստանալ թեմական առաջնորդից։ Հայտնի է, որ հակառակ կաթողիկոսի ցանկության՝ Մ. արք. Վեհապետյանն ընդառաջում է Լազարյաններին։

## № 6

1. «Անգույ թախանձող» ասելով նամակագիրը նկատի ունի Ագաֆոն Հաքիմյանցին։

## № 7

1. «Արշալույս Արարատյան» թերթի 1867 թ. հուլիսի 8-ի 809 համարում տպագրվում է խմբագրական մի հոդված, որը ծանուցում էր Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմի տպագրության լուրը։ Հոդվածագիրը ջերմությամբ ներկայացնում է Շահազիզի գործը։ «Երիտասարդ հեղինակը,— գրում է նա,— հայրենասիրական եռանդուն ոգիէ չարժյալ, մեծ տաղանդով ու սրտաշարժ կերպիվ կնկարագրե Հայաստանի դժբախտ վիճակը, խստիվ կքննադատե փառասեր ու արծաթասեր երևելի ազգայինները, առանց խնայելու վարժապետաց մեծագույն մասը և գկղերը, զորս բարեկամ խավարի և տգիտության կանվանեւ Կհորդորե զազգը ի կրթություն, ի լուսավորություն և ի հառաջադիմություն ըստ պահանջման ներկա զարուսս։

2. «Ջպայտական» գրքույկ անվանումը պետք է ընկալել իբրև նալբանդյանական գրքույկ։ Նկատի ունի «Լևոնի վշտի» նալբանդյանական ոգին։

3. «Դիմակակիր հեղինակ» ասելով Մսերյանը փորձում է նսեմացնել Շահազիզ-բանաստեղծին, նրան դարձնելով սոսկ Նալբանդյանի դիմակակիրը։

4. «Արշալույս Արարատյան» թերթի հուլիսի 22-ի 810 համարում խմբագիրը «Լևոնի վիշտը» պոեմից հատվածաբար հրապարակել է 61 քառատող։